ԻՆՉՈ՞Ի «ԿԱԹՈՂԻԿԷ» ԵՒ ՈՉ «ԿԱԹՈՂԻԿԵԱՅ»

Ինչպէս միշտ, այս յօդուածում եւս մենք խուսափել ենք մեր հռոմէական հայերի համար կաթողիկէ *անուանումը կիրառելուց եւ նախընտրել՝ եւրոպական լեզուներում սովորական դարձած* կաթոլիկ *անուանումը, թէեւ վերջինս եւս հաճելի չէ իր արդիականօրէն օտար կերպարանքով։ Տուեալ դէպքում խուսափումը* կաթողիկէ *բառից՝ զուտ լեզուական է մեզ համար։*

Կաթողիկէ բառը յունարէնից եկած իգական սեռի ածական է, որը նշանակում է «ընդհանրական»։ Յունարէնի քերականական սկզբունքների համաձայն այդ ածականը, գոյականների հետ սեռով համաձայնուելու համար, ունի երեք ձեւեր. արական՝ καθολικός, *իգական՝* καθολική, *չեզոք՝* καθολικόν։ *Դեռեւս մեր թարգմանիչների դարաշրջանում այս ածականի իգական* καθολική *(կաթողիկէ) ձեւը, իգական սեռի գոյական* ἐκκλησία *(եկեղեցի) բառի հետ միացած, ուղղակի մեքենայական տառադարձութեամբ մուտք է գործել հայերէնի մէջ՝* կաթողիկէ եկեղեցի *(*καθολική ἐκκλησία*) ձեւով, իսկ այդ անուանումն էլ ժամանակի ընթացքում Հռոմէական Եկեղեցու համար դարձել է յատուկ անուն։*

Այսքանը բաւ է ասելու համար, թէ ճիշտ չէ ծագումով իգական ձեւ ունեցող կաթողիկէ *բառը հայերէնում գործածել անսեռ բառերի հետ եւ ընդհանրապէս ոչ-իգական բնոյթ ունեցող հանգամանքների մէջ, ինչպէս, օրինակ,* Հռոմէական Եկեղեցուն պատկանող անհատներ *կամ* հռոմէադաւանները *իմաստով. սխալ է ասել՝* կաթողիկեներ, կաթողիկէ հայեր, հայ կաթողիկեներ։

Իսկ ի՞նչ անել։

Քանի որ կաթողիկէ *բառի վերջին է տառը յունարէնի իգական ղ ածանցն է, պէտք է ջնջել այդ եւ, մեր լեզուի ոգուն համապատասխանող անսեռ եայ ածանցով, օգտագործել բառը* կաթողիկեայ *ձեւով, ինչպէս արդէն Նոր կտակարանի հայերէն թարգմանութեան մէջ մի շարք գրքեր անուանուում են* կաթողիկեայ *թղթեր։ Այս հարցերի լուսաբանման համար կարելի է դիմել նաեւ հայերէնի վենետիկեան կաթողային բառարանի օժանդակութեանը*[82]*։ Հայերէն եայ ածանցով մեր հռոմէական հայերի անուանումը կը դառնայ աւելի հայաբոյր ու աւելի համակրելի, եւ մենք այսուհետեւ կարող ենք ունենալ* կաթողիկեայ հայեր, հայ կաթողիկեաներ *եւ դրանով կ՚ազատուենք ե՛ւ* կաթողիկէ-*ից, ե՛ւ* կաթոլիկ-*ից։ Մենք եայ ածանցով ունենք շատ բառեր՝* նորօրեայ, վերօրեայ, առժամեայ, միաբնեայ, երկաբնեայ, ոսկեայ, արծաթեայ *եւայլն։ Նոյն եայ ածանցով ածականները կարող են գործածուել նաեւ գոյականաբար, ինչպէս՝* առօրեայ *(«Ձեր առօրեան ինչպէ՞ս է անցնում») եւ այլն։*

---

82 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատոր Ա, Վենետիկ, 1836, էջ 1032։